ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԹԻՎ 01-2024 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք. Երևան

2024 թվականի ապրիլի 30-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերեր «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն (14588 ձայնի իրավունքով), ի դեմս «Ա» կարգի մենեջեր Վարտան Սիրմակեսի և «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն (ձայների քանակը՝ 2079), ի դեմս լիազորված անձ Վարտան Սիրմակեսի:

Նիստին մասնակցում էր նաև Ռաֆֆի Բալյոզյանը:

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 16667) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովի Նախագահ ընտրվեց Վ. Սիրմակեսը, իսկ ժողովի քարտուղար՝ Ռ. Բալյոզյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2023 թվականի շահույթի բաշխման մասին հարցը:
3. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը.

ՈՐՈՇԵՑ

Առաջին հարցով (զեկուցող՝ Ռ. Բալյոզյան)

Հաստատել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ հաշվի առնելով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի արտաքին աուդիտն իրականացնող «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ-ի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Ներքին աուդիտի եզրակացությունները:

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2024թ. ապրիլի 30-ից:

Երկրորդ հարցով (զեկուցող՝ Ռ. Բալյոզյան)՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2023 թվականի տարեկան ֆինանսական արդյունքներով շահույթի բաշխում չիրականացնել:

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2024թ. ապրիլի 30-ից:

Երրորդ հարցով (զեկուցող՝ Ռ. Բալյոզյան)՝

ա/ 2024 թվականի մայիսի 01-ից վաղաժամկետ դադարեցնել Խորհրդի անդամ Գևորգ Չաքմիշյանի լիազորությունները՝ հիմք ընդունելով Գևորգ Չաքմիշյանի դիմումը:

բ/ 2024 թվականի մայիսի 01-ից «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Խորհրդի նոր անդամ նշանակել Արտավազդ Սարգսյանին՝ պաշտոնավարման ժամկետը սահմանելով մինչև 2027թ.-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման օրը: Որպես վարձատրության չափ սահմանել՝ ամսական 350,000 ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր վճարները:

գ/ Հանձնարարել Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանին՝ օրենքով սահմանված ժամկետում իրականացնել ՀՀ Կենտրոնական բանկում Գևորգ Չաքմիշյանի լիազորությունների դադարեցման և Խորհրդի նոր անդամ Արտավազդ Սարգսյանի գրանցման գործընթացները:

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2024թ. ապրիլի 30-ից:

Սույն արձանագրությունը կազմված է 30.04.2024թ.-ին, հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, բաղկացած է 2 (երկու) էջից:

Ժողովի նախագահ՝ /ստորագրություն/ Վ.Սիրմակես

Քարտուղար՝/ստորագրություն/ Ռ.Բալյոզյան

Քաղվածքն արված է 30.04.2024թ.-ին՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 30.04.2024թ.-ի թիվ 01-2024 արձանագրության բնօրինակից:

Գործադիր տնօրեն՝ Գևորգ Մաչանյան